

ԵՊՀ-ի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2017 թվականի
նոյեմբերի 29-ին կայացած Գիտական Խորհրդի N5 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 38 անդամներից 31-ը (ցուցակը կցվում է)

Դեկան Մ.Ա.Գրիգորյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը:

Օրակարգ

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի հեռակա ուսուցմամբ ասպիրանտների ատեստավորումը ֆակուլտետում /զեկ. ամբ. վարիչներ/
2. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆ.Մ.Գ.Մանասյանի կողմից հրատարակված ուսումնական ձեռնարկների վերաբերյալ մասնագիտական փորձագիտական հանձնաժողովի եզրակացության ներկայացումը:
/զեկ. հանձնաժողովի նախագահ Ա.Ռ.Ավագյան/
3. Ընթացիկ հարցեր

ՀՄԵՑԻՆ. Երկրաֆիզիկայի ամբիոնի վարիչ Գ.Վ.Մարկոսյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Անի Գևորգյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Երկրաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Անի Գևորգյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

ՀՄԵՑԻՆ. Սերվիսի ամբիոնի վարիչ Ս.Ռ.Սուվարյանի հաղորդումը հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Ամալյա Նավասարդյանի, 2-րդ տարվա ասպիրանտր Շամամ

Գևորգյանի և 3-րդ տարվա ասպիրանտ Մարինե Մանուչարյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սերվիսի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ **Ամայա Նավասարդյանի, Շամամ Գևորգյանին և Մարինե Մանուչարյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

ԼՄԵՑԻՆ. Սոցիալ տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ Ա.Հ. Պոտոսյանի հաղորդումը հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտ Անի Հակոբյանի և 2-րդ տարվա ասպիրանտ Արմինե Մնացականյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ տնտեսական աշխարհագրության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ **Անի Հակոբյանին և Արմինե Մնացականյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

ԼՄԵՑԻՆ. Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի վարիչ Ս.Հ.Հայրոյանի հաղորդումը հեռակա ուսուցման ասպիրանտ Արմինե Հակոբյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ջրաերկրաբանության և ճարտարագիտական երկրաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ **Արմինե Հակոբյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

ԼՄԵՑԻՆ. Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի վարիչ Թ.Գ.Վարդանյանի հաղորդումը հեռակա ուսուցման 1-ին տարվա ասպիրանտներ Սեդա Վարդանյանի, Նինել Զաքարյանի, Արմենուհի Եղիազարյանի և 3-րդ տարվա

ասպիրանտներ Նարեկ Հովհաննիսյանի և Նինա Հարությունյանի ատեստավորման հարցի վերաբերյալ:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվի առնելով ուսումնահետազոտական անհատական պլանով նախատեսված կատարած աշխատանքները աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Ֆիզիկական աշխարհագրության և ջրաօդերևութաբանության ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտներ **Սեդա Վարդանյանին, Նինել Զաքարյանին, Արմենուհի Եղիազարյանին, Նարեկ Հովհաննիսյանին և Նինա Հարությունյանին** ատեստավորել՝ ուսումը շարունակելու համար:

ԼՄԵՑԻՆ. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի Սոցիալ տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆեսոր, փորձագիտական հանձնաժողովի նախագահ Ա.Ռ.Ավագյանի հաղորդումը Սոցիալ տնտեսական աշխարհագրության ամբիոնի պրոֆ.Մ.Գ.Մանասյանի կողմից տպագրված գրքերի վերաբերյալ հարցը: Փորձագիտական հանձնաժողովի նախագահ պրոֆ.Ա.Ռ.Ավագյանը ներկայացրեց հանձնաժողովի եզրակացությունը պրոֆ.Մ.Գ.Մանասյանի կողմից հրատարակված աշխատանքներում գրագործության փաստը (եզրակացությունը կցվում է):

ԵԼՈՒՅԹ ՈՒՆԵՑԱՆ. ֆակուլտետի փոխդեկան, դոց.Ա.Թ.Գրիգորյանը, ամբ.վարիչ, դոց.Ս.Ռ.Սուվարյանը, ամբ.վարիչ, դոց.Ա.Հ.Պոտոսյանը, ամբ.վարիչ, պրոֆ.Թ.Գ.Վարդանյանը, ամբ.վարիչ, դոց.Պ.Գ.Դավթյանը, ամբ.վարիչ, դոց.Շ.Վ.Խաչատրյանը, ամբ.վարիչ, դոց.Ռ.Ս.Մովսեսյանը, դոց.Ա.Ս.Սարգսյանը, ամբ.վարիչ, դոց.Գ.Վ.Մարկոսյանը, դոց.Ն.Ա.Հարությունյանը ինչպես նաև պրոֆ.Մ.Գ.Մանասյանը, ով հայտնեց իր անհամաձայնությունը եզրակացության մեջ ներկայացված արտագրության տոկոսային թվերի հետ՝ ընդունելով միայն, որ արտագրված է ընդամենը 15-20%-ի չափով: Վերջում ելույթ ունեցավ ֆակուլտետի դեկան, դոց.Մ.Ա.Գրիգորյանը: Բոլոր ելույթ ունեցողներն իրենց խոսքում խիստ դատապարտեցին պրոֆ. Մ.Գ.Մանասյանի գրագործության փաստը և նշեցին, որ նման վարքագիծ դրսևորող պրոֆեսորի գործունեությունը անթույլատրելի է ֆակուլտետում և նման վարքագծի տեր գիտնականը չի կարող աշխատել համալսարանում: Բացի այդ առաջարկություններ եղան փորձագիտական հանձնաժողովի կողմից կայացրած

եզրակացությունը ներկայացնել ԿԳ նախարարություն՝ «Աշխարհագրություն» առարկայի տպագրված դասագրքերը հանել շրջանառությունից՝ որպես գրագողության արդյունք:

ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ. Դատապարտել պրոֆեսոր Մ.Գ.Մանասյանի զեղծարարության և գրագողության փաստը, որի համար նման վարքագծի տեր պրոֆեսորը բարոյական իրավունք չունի համալսարանում դասախոսելու: Հարց բարձրացնել ռեկտորատի առջև պրոֆ.Մ.Գ.Մանասյանին ազատելու իր զբաղեցրած պաշտոնից, որպես գրագողի:

Առաջարկությունը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքով՝ ԿՈՂՄ-30, ԴԵՄ-1, ՁԵՌՆՊԱՀ-0

ՈՐՈՇԵՑԻՆ. Առաջարկել ռեկտորատին պրոֆեսոր Մ.Գ.Մանասյանին՝ որպես գրագողի, ազատել իր զբաղեցրած պաշտոնից:

Խորհրդի նախագահ

Մ.Ա.Գրիգորյան

Խորհրդի քարտուղար

Ե.Ս.Մանուկյան